կան գոյքը, գնան մի ապահով տեղ մնան, մինչեւ ինքն պատերազմ կը մղէ Օսմանցիների դէմ. եթէ կը յաղթէ նրանց, այն ժամանակ կը դառնան իրանց տեղերը, իսկ եթէ կը յաղթուի, ինքը կը քաշուի իր երկիրն եւ նրանք կարող են Օսմանցիների տիրապետութեան տակ մնալ:

Հայերը հասկացան Շահաբբասի խորամանկութիւնն եւ թէ ինչ չար նպատակ էր ծածկուած այդ սիրալիր առաջարկութեան տակ: Այդ առաջարկութիւնը Շահն անում էր նրանց 1605 թուի աշնան, ուստի ձմեռայ մնտենալը պատրուակ բռնելով, աղաչեցին, որ թոյլ տայ իրանց՝ ձմեռը մնալ, չուելու պատրաստութիւն տեսնել եւ թէ գարնան պատրաստ են կատարել հրամանը: Տեսնելով Շահաբբաս, որ իր աղուէսային հնարագիտութիւնը չաջողուեց, սկսեց գործել յայտնի համարձակ, եւ հրաման տուեց բռնութեամբ քշել ժողովուրդը: Իւրաքանչիւր գաւառի վրայ մի մի վերակացու կարգեց, զօրք տուեց նրանց օգնական եւ հրամայեց, որ ամէն շունչ կենդանի վարեն քշեն Պարսկաստան, ով որ ընդդիմանայ, չենայեն, խփեն սպանեն:

Թողնենք, որ ինքն Առաքել Վ.ը խօսէ:

"Եւ հրամայեաց Շահն, ուր եւ կարասցեն ձեռնարկել, արտասահման արարեալ վարեսցեն, եւ ոչ թողուցուն ամենեւին շունչ կենդանի, եթէ քրիստոնեայ եւ թէ մահմետական, գՀաւանողն բանիւ, եւ զոչ հաւանողն եւ զստուգանողն հրամանաց թագաւորին, սրով եւ մահուամբ եւ գերութեամբ: